Սալլի

Բնակչության թիվը՝ 246

Սալլի գյուղը հիմնվել է շատ հին ժամանակներում։ Այդ մասին կա հիշատակություն Ստեփանոս Օրբելյանի <<Պատմութիւն նահանգին Սիսիական>> գրքում, որում հիշատակված է, որ Գրիգոր Լուսավորիչի հանձնարարությամբ Հայաստանի տարբեր վայրեր քրիստոնեության քարոզման նպատակով ուղարկված քարոզիչներն իջևանել են Սալլի գյուղում։ Գյուղի տարածքը շատ է դուր եկել նրանց և սրբերից մեկի՝ սուրբ Մամասի մասունքները թաղվել են նշված տարածքում։ Հետագայում նույն տեղում կառուցվել է եկեղեցի, որը ներկա պահին վերկառուցման կարիք ունի։

Գյուղի ներկա բնակչության մեծամասնությունը գաղթել է Խոյից և Սալմաստից։ Սալլի գյուղը գտնվում է ներկայիս Վայոց Ձոր մարզի հյուսիս-արևմտյան մասում։ Հողատարածքները ձգվում են 1400-ից մինչև 2850 մետրի սահմաններում։ Գյուղը մարզկենտրոնից հեռու է 20 կմ, մայրաքաղաքից՝ 130 կմ։ Կլիման չոր է ու ցամաքային։ Հաճախակի կրկնվող երաշտներից տուժում են գյուղատնտեսական մշակաբույսերը։ Տարածքում մշակվում են բոլոր այն գյուղատնտեսական կուլտուրաները, որոնք տարածված են Հայաստանում։ Բնակչությունն զբաղվում է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ։

Տարածքը 1683 հա է, որից՝ 603 հա արոտ, 72 հա՝ խոտհարք, 100 հա՝ վարելահող։

Գյուղն ունի հիմնական դպրոց, սպորտային բաց հրապարակ, վարչական շենք, բուժկետ։

Գյուղի հիմնական խնդիրը խմելու և ոռոգման ջրով ապահովելու հարցն է։ Քանի որ ոռոգման ջրի մայր առուն անցնում է ավազուտների և հրաբխային նստվածքների միջով, ջուրը տեղ է հասնում մեծ կորուստներով։

Համայնքում առկա առանձնատների մեծ մասը կիսավթարային է։ Գյուղում կա 1 պանրագործարան և 1 մրգի սառնարան։

Գյուղը հեռախոսաֆիկացված է: